ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՐԽԻՎԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Ն ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՇՀԾՁԲ-17/12

ք. Երևան <<10>> մայիս 2017թ.

ՀՀ ԱՍՀՆ Սոցիալական ապահովության պետական ծառայությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Մ.Մինասյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը, ի դեմս հիմնադրամի գործադիր տնօրեն Ա.Աբրահամյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **արխիվացման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1), ինչպես նաև էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով՝ մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները: Ընդ որում Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ բացասական եզրակացությունը և չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 օրյա ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ դրական եզրակացությունը կամ Ծառայությունը չընդունելու դեպքում՝ սույն պայմանագրի 3.2-րդ կետի «ա)» ենթակետում նշված փաստաթղթերը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **30424590 (երեսուն միլիոն չորս հարյուր քսանչորս հազար հինգ հարյուր իննսուն)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25.12.2017թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

---

[1] *Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:*

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին

ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՍՀՆ Սոցիալական ապահովության պետական ծառայություն **ք. Երևան, Նալբանդյան-13** **ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն** **Հ/Հ 900011556355** **ՀՎՀՀ 02505511**	**«Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ** **ք. Երևան, Կ.Ուլնեցի 68** **Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Զեյթուն մ/ճ** **Հ\Հ 163518012543** **ՀՎՀՀ 02602449**
Աշխատակազմի ղեկավար՝ **Մ. Մինասյան**	**Գործադիր տնօրեն՝** **Ա. Աբրահամյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված 1
«10» մայիս 2017 թ. կնքված
N ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՇՀԾՁԲ-17/12 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
Չափաբաժին 1-Արխիվացման ծառայություններ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐՔՈՒՅԿՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՐԽԻՎԱՑՄԱՆ ԵՎ ՄՇՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Նախաբան

Սույն տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայություններն իրականացվելու են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) սոցիալական ապահովության պետական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) 2017 թվականի պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում:

«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-96-Ն ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) համաձայն՝ 2017 թվականի հունվարի 1-ից դադարեցվում է աշխատանքային գրքույկների կիրառությունը աշխատանքային հարաբերություններում:

Գործատուն պարտավոր է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով 2017 թվականի հունվարի 1-ից հետո՝ երկու տարվա ընթացքում, իր մոտ վարվող աշխատանքային գրքույկները նախ հանձնել լիազոր մարմնին, աշխատանքային գրքույկում առկա տեղեկատվությունը պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան ներառելու նպատակով, ապա՝ վերադարձնել աշխատողներին:

ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 18-ի N 882-Ն որոշմամբ լիազոր մարմին է ճանաչվել Ծառայությունը: Նույն որոշմամբ հաստատվել է աշխատանքային գրքույկները լիազորած մարմին ներկայացնելու և աշխատողներին հանձնելու կարգը:

Համաձայն կարգի՝ Ծառայություն ներկայացված աշխատանքային գրքույկները տեսաներածվում (սքանավորվում) կամ այլ եղանակով ստացվում են դրանց էլեկտրոնային լուսապատճենները և մուտքագրվում շտեմարան:

Որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

2. Անհրաժեշտությունը

Համաձայն ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 18-ի N 882-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ Ծառայության պետը մինչև 2017 թվականի հունվարի 1-ն ըստ տարածքային բաժինների հաստատում է մինչև 100 աշխատող ունեցող գործատուների կողմից աշխատանքային գրքույկները տարածքային բաժին ներկայացնելու

ժամանակացույցը (այսուհետ՝ ժամանակացույց, 30.12.2016թ. թիվ Ղ/60 հրամանը կցվում է)՝ նշելով նախընտրելի ժամկետը: Ժամանակացույցում ներառվում են նաև տարածքային բաժնի՝ գործընթացի համար պատասխանատու աշխատողի տվյալները (անունը, ազգանունը, ծառայողական էլեկտրոնային փոստի հասցեն, հեռախոսահամարը): Ժամանակացույցը տեղակայվում է ծառայության պաշտոնական կայքէջում (www.ssss.am):

100 և ավելի աշխատող ունեցող գործատուների կողմից աշխատանքային գրքույկները տարածքային բաժին ներկայացնելու ժամկետները փոխհամաձայնեցվում են գործատուների հետ:

Ծառայությունը պատվիրված նամակով կամ առձեռն ստորագրությամբ հանձնելու այլ պատշաճ եղանակով ծանուցում է գործատուին աշխատանքային գրքույկները ներկայացնելու ժամկետների մասին: Ծանուցումը պարունակում է նաև հետադարձ կապին վերաբերող տվյալներ (էլեկտրոնային փոստի հասցե, հեռախոսահամար):

Գործատուները, հիմք ընդունելով ժամանակացույցով սահմանված ժամկետները կամ փոխհամաձայնեցված ժամկետներում աշխատանքային գրքույկները ներկայացնում են Ծառայության տարածքային ստորաբաժանումներ:

Ընդ որում, գործատուն, մինչև իր մոտ վարվող աշխատանքային գրքույկները տարածքային բաժին ներկայացնելը, աշխատանքային գրքույկում լրացված վերջին էջից հետո նշում է աշխատանքային գրքույկի լրացված բոլոր էջերի թիվը և ստորագրում (կնիքի առկայության դեպքում՝ նաև կնքում)՝ նշելով իր զբաղեցրած պաշտոնը, անունը և ազգանունը:

Գործատուների ներկայացրած աշխատանքային գրքույկները տեսաներածվում (սկանավորվում) կամ այլ եղանակով ստացվում են դրանց էլեկտրոնային լուսապատճենները:

Ստացված էլեկտրոնային լուսապատճենները ներառվում են համապատասխան տեղեկատվական համակարգ՝ հետագայում, որպես աշխատանքային ստաժը հաստատող տեղեկատվություն կիրառելու նպատակով, իսկ աշխատանքային գրքույկները վերադարձվում են գործատուներին՝ աշխատողներին վերադարձնելու նպատակով:

Նախատեսվում է շուրջ 41000 գործատուներից հավաքել մոտ 555 000 վարձու աշխատողների աշխատանքային գրքույկները և սկանավորել դրանք (կամ այլ եղանակով ստանալ դրանց էլեկտրոնային լուսապատճենները):

Հաշվի առնելով ՀՀ պետական բյուջեով այդ նպատակով հատկացված միջոցները, ինչպես նաև իրականացվելիք աշխատանքների ծավալը՝ նախատեսվում է գործընթացն իրականացնել փուլերով, գործընթացում ներգրավելով նաև այլ կազմակերպություն (այսուհետ՝ Կապալառու):

3. Նպատակը

Սույն տեխնիկական բնութագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Օրենքով, ինչպես նաև որոշմամբ սահմանված գործառույթները՝ ապահովելով գործատուների կողմից ներկայացված աշխատանքային գրքույկների տեսաներածումը (սկանավորումը) կամ այլ եղանակով ստացված գրքույկների էլեկտրոնային լուսապատճենների ստացումը:

4. Աշխատանքային գրքույկների էլեկտրոնային լուսապատճեններին ներկայացվող հիմնական պահանջները և այլ պայմաններ

Աշխատանքային գրքույկների էլեկտրոնային լուսապատճենները պետք է բավարարեն հետևյալ պահանջներին՝

- յուրաքանչյուր աշխատանքային գրքույկի՝ գրառումներ պարունակող բոլոր էջերի էլեկտրոնային լուսապատճենները պետք է ձևավորվի որպես առանձին (միասնական) ֆայլ,
- աշխատանքային գրքույկի թղթային յուրաքանչյուր երկու էջ արտացոլվում է էլեկտրոնային լուսապատճենի մեկ էջում (սկանավորվում է որպես մեկ էջ),
- աշխատանքային գրքույկի էլեկտրոնային լուսապատճենը պետք է լինի ամբողջական և ամբողջությամբ ընթեռնելի՝ ունենալով առնվազն բնօրինակ փաստաթղթի ընթեռնելիությունը,
- ունենան 200 dpi կետայնություն, որոնք որպես բնօրինակ պետք է հատկացվեն Ծառայությանը առավել մանրամասն դիտման, ըստ անհրաժեշտության նաև տպագրության համար,
- ունենան նաև 72 dpi կետայնության տարբերակները, որոնց չափսերը պետք է նախատեսված լինեն էկրանային դիտման համար:

Միաժամանակ, Կապալառու կազմակերպությունը սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքները պետք է կազմակերպի այնպես, որ պահպանվեն ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 18-ի N 882-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները, այդ թվում, կարգի 17-րդ կետով սահմանված ժամկետները:

Կապալառու ընկերությունը աշխատանքները համակարգելու և իրականացնելու նպատակով պետք է հատկացնի ներկայացուցիչ՝ սպասարկման համակարգող գրավոր տրամադրելով Ծառայությանը նրա անունը, ազգանունը, հայրանունը, էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամարը: Սպասարկման համակարգողը պետք է աշխատանքի ընթացքում առաջացած հարցերի վերաբերյալ տրամադրի խորհրդատվություն (հեռախոսի կամ էլեկտրոնային փոստի միջոցով):

Սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքների այս փուլում՝ 2017 թվականին նախատեսվում է սկանավորել մոտ 100 հազար աշխատանքային գրքույկներ:

Կապալառուի կողմից ներկայացվում է գնային առաջարկ՝ նախատեսված աշխատանքն ողջ ծավալով և սահմանված որակով կատարելու համար:

5. Իրականացվելիք աշխատանքների շրջանակը

Կապալառուն իրականացնում է հետևյալ աշխատանքները.

1) Պատվիրված նամակով կամ ստորագրությամբ առձեռն հանձնելու կամ այլ պատշաճ եղանակով 100 և ավելի վարձու աշխատող ունեցող գործատուներին ծանուցում է աշխատանքային գրքույկները ներկայացնելու ժամկետների մասին և այդ գործատուների հետ փոխհամաձայնեցնում է Ծառայության անունից աշխատանքային գրքույկները

ընդունելու ժամկետները՝ համապատասխան ժամանակացույցը տրամադրելով Ծառայությանը,

2) Ծառայության հետ փոխհամաձայնեցված ժամկետներում, Ծառայության տարածքային ստորաբաժանումների տեղակայման վայրում ստանում է տարածքային ստորաբաժանումներ ներկայացված աշխատանքային գրքույկները և սկանավորելու կամ այլ եղանակով դրանց էլեկտրոնային լուսապատճենները ստանալու համար տեղափոխում է համապատասխան վայր,

3) Ծառայության հետ փոխհամաձայնեցված ժամկետներում և կարգով, 100 և ավելի աշխատող ունեցող գործատուներից գործատուի նախանշած վայրում Ծառայության անունից ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 18-ի N 882-Ն որոշմամբ սահմանված կարգով ընդունում է աշխատանքային գրքույկները, հաշվառում դրանք համապատասխան տեղեկատվական համակարգի միջոցով, փաթեթավորում և սկանավորելու կամ այլ եղանակով դրանց էլեկտրոնային լուսապատճենները ստանալու համար տեղափոխում է համապատասխան վայր,

4) Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրի տվյալների հիման վրա նույնականացնում է ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 18-ի N 882-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետում նշված ակտում ներառված անձանց,

5) ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 18-ի N 882-Ն որոշմամբ հաստատված կարգի 18-րդ և 19-րդ կետերով նախատեսված ակնհայտ անհամապատասխանությունների առկայության դեպքում՝ առանձնացնում է այն աշխատանքային գրքույկները, որոնց կապակցությամբ առկա են ակնհայտ անհամապատասխանություններ և դրանց մասին պատվիրված նամակով կամ ստորագրությամբ առձեռն հանձնելու կամ այլ պատշաճ եղանակով ծանուցում է գործատուին՝ վերադարձնելով այդ աշխատանքային գրքույկները (ակնհայտ անհամապատասխանությունների դեպքում կապալառուն կարող է աշխատանքային կարգով գործատուի հետ ճշտել դրանք),

6) ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 18-ի N 882-Ն որոշմամբ հաստատված կարգի 18-րդ և 19-րդ կետերով նախատեսված ակնհայտ անհամապատասխանությունների բացակայության դեպքում սկանավորում է գործատուների կամ Ծառայության տարածքային ստորաբաժանումների կողմից իրեն հանձնված աշխատանքային գրքույկները կամ այլ եղանակով ստանում է դրանց էլեկտրոնային լուսապատճենները, պատկերների էլեկտրոնային լուսապատճենները մշակելու համար նախատեսված ծրագրային գործիքով մշակում է լուսապատճենները՝ արդյունքները ներառելով համապատասխան տեղեկատվական համակարգ: Ընդ որում, կապալառուն.

ա. սկանավորում է աշխատանքային գրքույկի բոլոր այն էջերը, որոնցում առկա են ձեռքով կատարված գրառումներ (ներառյալ՝ ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 18-ի N 882-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետում նշված գրառումը),

բ. մինչև աշխատանքային գրքույկը սկանավորելը կամ այլ եղանակով դրա էլեկտրոնային լուսապատճենները ստանալը, ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 18-ի N 882-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետում նշված կարգով կատարված գրառման էջում (իսկ եթե գործատուն չի կատարել գրառումը, ապա՝ որոշմամբ

հաստատված կարգի 6-րդ կետում նշված գրառումը կատարելու համար նախատեսված էջին) Ծառայության անունից դնում է համապատասխան դրոշմակնիք՝ մեկ անգամ ևս նշելով աշխատանքային գրքույկի լրացված բոլոր էջերի թիվը (դրոշմակնիքը կամ դրոշմակնիքները ձեռք է բերում Կապալառուն՝ փոխհամաձայնեցնելով Ծառայության հետ),

7) Աշխատանքային գրքույկները գործատուին վերադարձնելու ժամկետը երկարաձգելու անհրաժեշտության դեպքում այդ մասին պատվիրված նամակով կամ ստորագրությամբ առձեռն հանձնելու կամ այլ պատշաճ եղանակով տեղեկացնում է գործատուին, ինչպես նաև փոխհամաձայնեցված կարգով տարածքային բաժնին (եթե աշխատանքային գրքույկները կապալառուին է հանձնել Ծառայության տարածքային բաժինը),

8) Գործատուների հետ փոխհամաձայնեցված կարգով իրականացնում է գործատուներից ընդունված աշխատանքային գրքույկները գործատուներին հանձնելու (վերադարձնելու) աշխատանքները,

9) իրականացնում է Ծառայության տարածքային բաժնից ընդունված աշխատանքային գրքույկները Ծառայության տարածքային բաժնի գտնվելու վայրում տարածքային բաժնին, իսկ Ծառայության հետ փոխհամաձայնեցված դեպքում՝ անմիջապես գործատուներին հանձնելու (վերադարձնելու) աշխատանքները,

10) Կապալառուն պետք է ապահովի աշխատանքային գրքույկների պատշաճ պահպանություն՝ ընդունելուց մինչև գործատուին կամ տարածքային բաժին հանձնելը, բացառելու համար աշխատանքային գրքույկների կորստյան ռիսկը:

Համապատասխան տեղեկատավական համակարգը, ներառյալ ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 18-ի N 882-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետում նշված ակտում ներառված անձանց նույնականացնելու համար անհրաժեշտ՝ ՀՀ բնակչության պետական ռեգիստրի տվյալները Կապալառուին է տրամադրում Ծառայությունը:

6. Իրականացված աշխատանքների ընդունում

Սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքում յուրաքանչյուր ամսվա ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ Կապալառուն Ծառայություն է ներկայացնում հաշվետվություն՝ ուղեկցող նամակով, և տվյալ ամսվա ընթացքում ստացված արդյունքներով (անհրաժեշտության դեպքում նաև արտաքին կրիչով), իսկ առնչվող փաստաթղթերը՝ թղթային տարբերակներով:

Ծառայության Տեղեկատվական տեխնոլոգիաների և ռիսկերի կառավարման վարչությունը ապահովում է կատարված աշխատանքների վերաբերյալ՝ ներքին իրավական ակտով ստեղծված հանձնաժողովի եզրակացությունը և այդ մասին գրավոր տեղեկացնում Կապալառուին: Կապալառուն ստացված դրական եզրակացության հիման վրա ներկայացնում է հանձնման – ընդունման արձանագրությունը և հարկային հաշիվը երկուական օրինակներով:

Աշխատանքների սկիզբը	Աշխատանքների ավարտը
01.06.2017թ.	20.12.2017թ.

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՍՀՆ Սոցիալական ապահովության պետական ծառայություն ք. Երևան, Նալբանդյան-13 ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011556355 ՀՎՀՀ 02505511	««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ ք. Երևան, Կ.Ուլնեցի 68 Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Զեյթուն մ/ճ Հ\Հ 163518012543 ՀՎՀՀ 02602449
Աշխատակազմի ղեկավար՝ Մ. Մինասյան	Գործադիր տնօրեն՝ Ա. Աբրահամյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2
«10» մայիս 2017 թ. կնքված
N ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՇՀԾՁԲ-17/12 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ ընթացքում՝ ընդ որում			
		2-րդ եռամսյակ	**3-րդ եռամսյակ**	**4-րդ եռամսյակ**	Ընդամենը Տարի
1	Արխիվացման ծառայություններ	10648600	18254750	30424590	**30424590**

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱՍՀՆ Սոցիալական ապահովության պետական ծառայություն
ք. Երևան, Նալբանդյան-13
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011556355
ՀՎՀՀ 02505511

Աշխատակազմի ղեկավար՝
Մ. Մինասյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ
ք. Երևան, Կ.Ուլնեցի 68
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ,
Զեյթուն մ/ճ
Հ\Հ 163518012543
ՀՎՀՀ 02602449
Գործադիր տնօրեն՝
Ա. Աբրահամյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
<<____>> մայիս 2017 թ. կնքված
N **ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՇՀԾՁԲ-17/12** *ծածկագրով գնման պայմանագրի*

Պայմանագրի կողմ

_____
_____
գտնվելու վայրը _____
հհ _____
_____
հվհհ _____

Պատվիրատու

ՀՀ ԱՍՀՆ Սոցիալական ապահովության
պետական ծառայություն
ք. Երևան, Նալբանդյան-13
Հ/Հ 900011556355
ՀՎՀՀ 02505511

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2017 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2017թ.
Պայմանագրի համարը՝ ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՇՀԾՁԲ-17/12
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2017թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
<<____>> _____2017 թ. կնքված
N **ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՇՀԾՁԲ-17/12** *ծածկագրով գնման պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ ԱՍՀՆ Սոցիալական ապահովության պետական ծառայության (այսուհետ՝ Պատվիրատու) և Նորք սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն հիմնադրամի (այսուհետ՝ Կատարող) միջև 2017 թ. ------- -ին կնքված N **ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՇՀԾՁԲ-17/12** գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2017թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն